# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 61-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին ***որոշում է՝***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի 2023 թվականի հոկտեմբերի 5-ի հերթական նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 22-Ն որոշման N2, N3 և N6 հավելվածները նոր խմբագրությամբ հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի 2023 թվականի բյուջեի երրորդ եռամսյակային հաշվետվության կատարման մասին:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 02-ի թիվ 10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի վարչական տարածքում հողամասերի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Սյունիքի մարզի Քաջարան համայնքի համակցված փաստաթղթում նախատեսվող փոփոխություններին հավանություն տալու մասին:
5. <<Կազմակերպությունների կողմից վճարված ռոյալթիներից համայնքին կատարված մասհանումների ծախսման>> 2024 թվականի ծրագիրը հաստատելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/ տրամադրելու համաձայնություն տալու մասին:

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

**2023թ. Հոկտեմբերի 5**
**Ք.Քաջարան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ
### 05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 62-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 22-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2, N 3 ԵՎ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդված 9-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 22-Ն որոշման N 2, N 3 և N 6 հավելվածները՝ նոր խմբագրությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

**2023թ. Հոկտեմբերի 5**
**Ք.Քաջարան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 63-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Ընդունել ի գիտություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի 2023 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման հաշվետվությունը՝ համաձայն 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

**2023թ. Հոկտեմբերի 5**
**Ք.Քաջարան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
**05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 64-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 02-Ի ԹԻՎ 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով Թիվ 35 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 22.09.2023 թվականի N 3 արձանագրությունը. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 02-ի N 10-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝

1-ին կետի 3) ենթակետի՝ «Գևորգյան Վարդան» բառերը փոխարինել «Բաբաջանյան Գոռ» բառերով.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

**2023թ. Հոկտեմբերի 5**
**Ք.Քաջարան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 65-Ա**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման, հաշվի առնելով <<ԱԺԴԱՆԱԿ>> ՍՊ ընկերության տնօրենի դիմումը և Քաջարան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Հավանություն տալ Սյունիք-5 միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերում կատարել փոփոխություն, ըստ որի առաջարկվում է՝

ա/ ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Անդոկավան գյուղի 2-րդ փողոցի 19/1 հասցեում գտնվող <<ԱԺԴԱՆԱԿ>> ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության 0,16791 հա բնակելի կառուցապատման /կադաստրային ծածկագիր 09-038-0022-0023/ հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նշանակության հողերի կատեգորիա՝ <<արդյունաբերական օբյեկտներ>> գործառնական նշանակությամբ:

բ/ ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Անդոկավան գյուղի 2-րդ փողոցի 23-27 հասցեում գտնվող <<ԱԺԴԱՆԱԿ>> ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության 0,471 հա բնակելի կառուցապատման /կադաստրային ծածկագիր 09-038-0019-0021/ հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նշանակության հողերի կատեգորիա՝ <<արդյունաբերական օբյեկտներ>> գործառնական նշանակությամբ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
**05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 66-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ «ԶՊՄԿ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՍԵՐՎԻՏՈՒՏ/ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի դրույթներով, հաշվի առնելով <<ԶՊՄԿ>> ՓԲ ընկերության գրությունը և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Համաձայնություն տալ Քաջարան համայնքի վարչական տարածքում, համայնքի սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասերը սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/ տրամադրելու՝

ա/ Քաջարանի համայնք, Քաջարանց գյուղում գտնվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0,025 հա հողամասից 10 /տասը/ տարի ժամկետով «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ էլեկտրամատակարարման գծերի անցկացման, շահագործման և սպասարկման համար, սահմանելով տարեկան 71200 /յոթանասունմեկ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ վարձավճար:

բ/ Քաջարանի համայնք, Քաջարան քաղաքում գտնվող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման 1,56 հա հողամասից 2 /երկու/ տարի ժամկետով «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, սահմանելով տարեկան 9523800 /ինը միլիոն հինգ հարյուր քսաներեք հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ վարձավճար:

գ/ Քաջարանի համայնք, Քաջարան քաղաքում գտնվող բնակավայրերի նշանակության 0,0215 հա այլ հողամասից 25 /քսանհինգ/ տարի ժամկետով «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը

տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, սահմանելով տարեկան 525000 /հինգ հարյուր քսանհինգ հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

դ/ Քաջարանի համայնք, Քաջարան քաղաքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,03307 հա արոտներից և 0,01222 հա այլ հողամասից 25 /քսանհինգ/ տարի ժամկետով «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, ընդամենը սահմանելով տարեկան 11600 /տասնմեկ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ վարձավճար:

ե/ Քաջարանի համայնք, Քաջարան քաղաքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,01674 հա այլ հողամասից 25 /քսանհինգ/ տարի ժամկետով «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով 4200 (չորս հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ վարձավճար:

զ/ Քաջարանի համայնք, Քաջարան քաղաքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,13509 հա այլ հողամասից 25 /քսանհինգ/ տարի ժամկետով «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, սահմանելով տարեկան 33800 /երեսուներեք հազար ութ հարյուր / ՀՀ դրամ վարձավճար:

է/ Քաջարանի համայնք, Քաջարան քաղաքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,01246 հա վարելահողերից, 0,001412 հա արոտներից և 0,04348 հա այլ հողամասից 25 /քսանհինգ/ տարի ժամկետով «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը տրամադրել սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ)՝ հողամասով անցնելու և երթևեկելու նպատակով, ընդամենը սահմանելով տարեկան 60400 /վաթսուն հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ վարձավճար:

2. Վարձավճարը ենթակա է վճարման մինչև յուրաքանչյուր հաշվետու տարվան հաջորդող ամսվա տասնհինգերորդ օրը: Սահմանված ժամկետում վճարումներ չկատարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար սահմանել տույժ՝ ամսական վճարի գումարի 0.05 տոկոսի չափով:

3. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումն:

| Կողմ -11 | Դեմ -1 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ | ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ | |
| ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ | | |

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

**2023թ. Հոկտեմբերի 5**
**Ք.Քաջարան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## 05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 67-Ա

## <<ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՌՈՅԱԼԹԻՆԵՐԻՑ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ>> 2024Թ. ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5.1 կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 01.09.2022թ. N 1358 որոշմամբ սահմանված <<Համայնքային մասհանումների ծախսման ծրագիրը կամ ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման լիազոր մարմինների հետ համաձայնեցման կարգով>> Քաջարան համայնքի ղեկավարի ներկայացրած ծրագրային առաջարկը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հաստատել <<Կազմակերպությունների կողմից վճարված ռոյալթիներից համայնքին կատարված մասհանումների ծախսման>> 2024թ. ծրագիրը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

**2023թ. Հոկտեմբերի 5**
**Ք.Քաջարան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## 05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 68-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասով և հաշվի առնելով Գեղի վարչական ղեկավարի 07.09.2023 թվականի զեկուցագիրը, Քաջարան համայնքի Աջաբաջ գյուղի բնակիչ՝ Անդրանիկ Ղազարյանի 08.09.2023 թվականի դիմումը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Աջաբաջ գյուղի տարածքում գայլերի հարձակման հետևանքով գյուղատնտեսական կենդանիների ոչնչացման ուսումնասիրության, վնասի գնահատման հանձնաժողովի 08.09.2023 թվականի արձանագրությունը, Քաջարան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարել հատկացում՝

1. Անդրանիկ Ղազարյանին՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ – գայլերի հարձակման հետևանքով հասցված վնասի չափը մեղմացնելու նպատակով,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

**2023թ. Հոկտեմբերի 5**
**Ք.Քաջարան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 69-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու կանոնակարգի 6-րդ բաժնի 6.1-րդ և 6.2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի նոյեմբերի 24-ը ժամը 15:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԴԱՎԻԹ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՄԱԿԻՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀՈՎԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

**2023թ. Հոկտեմբերի 5**
**Ք.Քաջարան**